600.0405.14.12.16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

14 դեկտեմբերի 2016 թվականի №405Ա
ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 19-Ի №22Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին կետը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը և հաշվի առնելով «ԽԱՉԱՏՐՅԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2016 թվականի դեկտեմբերի 6-ի գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2014 թվականի փետրվարի 19-ի «ԽԱՉԱՏՐՅԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Դալի» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №22Ա որոշման մեջ՝

   1) «Ծղուկ» բառը փոխարինել «Գորայք» բառով.

   2) 2-րդ կետով հաստատված՝ «ԽԱՉԱՏՐՅԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Դալի» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0533 լիցենզիայի պայմանների՝

      ա. 3-րդ կետի 1-ին ենթակետում «մինչև 2016 թվականի դեկտեմբերի 15-ը» բառերը փոխարինել «մինչև 2016 թվականի դեկտեմբերի 14-ը» բառերով.

բ. 6-րդ, 7-րդ և 10-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Լիցենզավորված անձին իրավունք է տրվում և պարտավորեցվում է Լիցենզիայով սահմանված ժամկետում կառուցել 3920 կՎտ հաշվարկային հզորությամբ «Դալի» փոքր հիդրոէլեկտրակայանը, արտադրել էլեկտրական էներգիա (հզորություն) ու այն վաճառել Շուկայի կանոններով:».

«7. Փոքր հիդրոէլեկտրակայանի տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

1) Ջրառի նիշ՝ 2558,0 մ, ջրահեռացման նիշ՝ 2292,0 մ,

2) Հաշվարկային ելք՝ 2,3 խմ/վ.,

3) Հաշվարկային ճնշում՝ 212,97 մ.,

4) Փոքր հիդրոէլեկտրակայանի հաշվարկային հզորություն՝ 3920 կՎտ:».

«10. «Դալի» փոքր հիդրոէլեկտրակայանի փաստացի տեղակայված հզորությունը 4000 կՎտ է, իսկ էլեկտրական էներգիայի արտադրության գործունեությունն իրականացվում է հետևյալ սարքավորումներով՝

1) հիդրոտուրբին №1՝ CjA-237-w-30/1x10, 584,2 - 1207,6 կՎտ, 2015թ,
2) գեներատոր №1՝ SF-1000-10/1430, 1000 կՎտ, 2015թ,
3) հիդրոտուրբին №2՝ CjA-237-w-30/1x10, 584,2 - 1207,6 կՎտ, 2015թ,
4) գեներատոր №2՝ SF-1000-10/1430, 1000 կՎտ, 2015թ,
5) հիդրոտուրբին №3՝ CjA-237-w-125/1x-14.5, 1075,3 – 3404,2 կՎտ, 2015թ,
6) գեներատոր №3՝ SF-2000-12/1930, 2000 կՎտ, 2015թ:»:

2. «ՎՏԲ-Հայաստան Բանկ» փակ բաժնետիրական ընկերությանն ազատել 2016 թվականի փետրվարի 1-ի գրությամբ ներկայացված №2016/01 երաշխիքի համաձայն Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի առջև ստանձնած ինը միլիոն ութ հարյուր հազար դրամ երաշխիքային պարտավորությունից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
14 դեկտեմբերի 2016թ.
ժամը 16[00]